ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/4-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 03 դեկտեմբերի 2018թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Շաբոյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հ. Թադևոսյան, Լ. Միքայելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Շեկոյան:

1. «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/4-1» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 2018թ նոյեմբերի 12-ին գնման ընթացակարգ է հրապարակվել www. *eauction.armeps.am* կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ընդունման վերջնաժամկետ հաստատված է եղել մինչև 2018 թվականի նոյեմբերի 20ը, ժամը՝ 11:00-ն: Հակադարձ աճուրդը սկսվել է սկսվել է 2018 թվականի նոյեմբերի 22-ին ժամը՝ 11:00-ին www. *eauction.armeps.am* կայքի միջոցով:

1.3 Հայտեր էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը	**Հայտերի գնահատման արդյունքները /համապատասխանելու դեպքում նշել "X"/**
«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ տպագրատուն ԱՀ ԲԲԸ» ՍՊԸ	X

2. ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար 2018թ. ընթացքում պատվերով տպագրվող նյութերի էլեկտրոնային աճուրդ գնման ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/4-1» ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում հանձնաժողովը որոշել էր NN 1-14 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ին, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացվել էր հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

3. Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը հանձնաժողովը որոշեց.

3.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/4-1» ծածկագրով ընթացակարգի NN 1-14 չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

3.3 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ա. Շաբոյան

Քարտուղար՝ ---------- Հ. Շեկոյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Հ. Թադևոսյան

2. ---------- Լ. Միքայելյան